ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք.Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. si.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ.arman-erem@mail.ru

№ 03-15/115

«10» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Ղավթյանին

«ԻՁՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով « ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգում » աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 6211,52 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«10» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝
_____ Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Տավուշի մարզպետարան Նախագծող՝ «ԻՋՆԱԽ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Իջևան համայնքի թիվ 5 դպրոցի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Յաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

1. Առաջին հարկի գոյություն ունեցող փայտե պատուհանները քանդել, բացվածքը լայնացնել 20սմ-ով և փոխարինել մ/պլ պատուհաններով (2 պատուհան ), ներքին շեպերը սվաղել գաջի շաղախով, իսկ արտաքինը ց/ա շաղախով.
2. Երրորդ մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի ջեռուցման համակարգերի վերանորոգում: Ջեռուցման համակարգը սնվում է 4-րդ մասնաշենքի նկուղային հարկով անցնող գործող ջեռուցման Ф57x4մմ մետաղական խողովակից: Սնող խողովակը մինչև 3-րդ մասնաշենքի նկուղը նախատեսված է անցկացնել Ф57x4մմ մետաղական խողովակներով վերգետնյա և ստորգետնյա եղանակով, որի վերգետնյա հատվածը նախատեսված է երկշերտ յուղաներկում, իսկ ստորգետնյա հատվածը նորմալ հիդրոմեկուսացում: Պատի մեջ անցումային մասում նախատեսված է պաշտպանիչ պատյան մետաղական խողովակներից d = 76մմ: Շենքի ներսում խողովակաշարը նախատեսված է d=20÷40մմ մետաղապլաստե խողովակ: Միջնորմերի անցումներում նախատեսված է պաշտպանիչ պատյան d = 40մմ մետաղական խողովակից : Ջեռուցման մարտկոցները նախատեսված են ալյումինե H= 350մմ:

Նախագծման հիմք է ծառայում Իջևան համայնքի թիվ 5 դպրոցի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Ներկայացված է նախահաշիվ *6211,52* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՅՅ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Յաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Յամաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

« Տավուշի մարզի Իջևան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգում » աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *6211,52* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդալյան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան